ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ, Զանգեզուրի հայերը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969, 334 էջ, գինը 3 ռ. 35 կոպ.:

Լույս տեսավ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանի «Զանգեզուրի հայերը» մենագրությունը, որը տպագրության է պատրաստել հանգուցյալ պրոֆեսորի դուստր, պատմական գիտությունների դոկտոր Սրբուհի Լիսիցյանը և խնամքով խմբագրվել է Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանի ու Սրբ. Լիսիցյանի կողմից։

Առաջինը, ով հիմք դրեց Զանգեզուրի ազգագրական ուսումնասիրությանը, Ա. Զելինսկին էր իր «Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде Елисаветпольской губернии» *գրքույկով։ Նրան հետևում են Ն. Գրիգորովի, Ե. Մելիք-Շահնազարյանի, Ն. Շիրակունու, Գեղեվանովի հոդվածները, որոնք տպագրվեցին* «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» *մատենաշարով։ Այդ հոդվածների եզրափակումն է հանդիսանում ականավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի «Զանգեզուրի գավառը» արժեքավոր աշխատությունը, որը լույս է տեսել 1899 թ. «Ազգագրական հանդեսում», ապա առանձին գրքով։ Խորհրդային շրջանում 1930 թ. լույս է տեսել միայն Գ. Զուրսինի* «Армяне Зангезура» *ուշագրավ գրքույկը։ Սրանց լրացնելու է գալիս բազմահմուտ ազգագրագետ Ստ. Լիսիցյանի սույն մենագրությունը, որը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքն է, ուր օգտագործված են Զանգեզուրի մասին եղած բոլոր աղբյուրները՝ հնագիտական նյութեր, մատենագիրների աշխատություններ, արձանագրություններ, հեղինակի գրառած դաշտային ազգագրական նյութեր։*

Մենագրության ներածությունում տրվում է Զանգեզուրի վերաբերյալ եղած գրականության տեսությունը, գավառի վարչական կառուցվածքը՝ սկսած հնագույն շրջանից մինչև XX դարի քսանական թվականները։ Լինելով հմուտ աշխարհագրագետ, հեղինակը տվել է նաև Զանգեզուրի ֆիզիկա-աշխարհագրական բնութագրությունը։

Առաջին գլուխը կրում է «Բնակչություն» խորագիրը։ Մարդաբանական ուսումնասիրությունների հիման վրա (Է. Շանտր, Վ. Բունակ) հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Զանգեզուրի հայերը պատկանում են արմենոիդ տիպի ղարաբաղյան խմբին, որոնք լայնագլուխ կամ բրախիցեֆալ են։ Հեղինակը հատկապես ընդգծում է այն փաստը, որ «Զանգեզուրի բնակչության կազմի մեջ բացի զուտ ղարաբաղյան հնդեվրոպական տարրից, մտել է հնդեվրոպականից տարբեր էթնիկ տարր, որը կարող էր կամ նրա հետ դրսից եկած լինել, կամ նրա այստեղ երևալուց առաջ արդեն տեղում գոյացած, գուցե հենց աղվանական շերտի հետ սերտորեն շաղկապված, մի շերտի, որի լեզվական առանձնահատկությունների մասին շատ քիչ (գուցե և գրեթե ոչ մի) անվիճելի և հաստատ բան գիտենք» (էջ 28)։

Աշխատությունն մեջ այնուհետև հանգամանորեն նկարագրվում է Զանգեզուրի բնակչության վիճակը մինչև ռուսական տիրապետության հաստատումը, շարադրվում է Զանգեզուրի պատմությունը հնագույն շրջանից սկսած մինչև XIX դարի վերջերը, տրվում է բերդերի, վանքերի և պատմական այլ հուշարձանների գիտական բնութագրությունը։ Հատկապես մանրամասն են նկարագրված Զանգեզուրի մահալներն ու բնակչությունը ռուսական տիրապետության հաստատման միջոցին՝ Զանգեզուրը որպես Ղարաբաղի պրովինցիայի մի մաս, մելիքների տիրապետությունը, նրանց իրավունքները, սենատոր Հանի օրենքները և դրանց հետևանքները։

Հաջորդ գլուխը վերնագրված է «Բնակավայրերը և շենքերը»։ Այստեղ քննության են առնվում բնակավայրերի բնույթը և տեղադրումը։ Հեղինակը ճիշտ կերպով նկատում է, որ բնակավայրերի տեղաբաշխումը Զանգեզուրում ենթարկվել է աղբյուրների դասավորության, իշխող քամիների ուղղության և թշնամական հարձակումներից ապահովության պայմաններին։ Գյուղերը խոր մտնում են ձորերի մեջ (Հալիձորը, Շինուհայրը, Խոտը, Հին Գորիսը, Վերին Շենը, Քարահունջը, Խնձորեսկը և այլն)։ Կան ամբողջովին քարայր ներկայացնող բնակարաններ։ Այս տեսակետից տիպական է Խնձորեսկը։ Այդպիսի բնակարաններ կան Հին Գորիսում, Տեղում, Խրնածախում և ուրիշ վայրերում։ Ապա շարադրվում են Զանգեզուրի կենտրոն Գորիսի բարձրացման սոցիալ-տնտեսական հանգամանքները՝

կարևոր ճանապարհների հանգույց, առևտրական և վարչական կենտրոն լինելը և այլն։ Այնուհետև հեղինակն անցնում է բնակարանների և գյուղատնտեսական շենքերի բնութագրմանը։ Մանրամասն նկարագրում է քարայրները որպես բնակարան, բնակարանի մյուս ձևերը, նկարագրում հացատունը, սրահը, գոմը, արխաջը, ախոռը, հարդանոցը, ինչպես նաև օգտագործվող տնային իրերը։

Մյուս գլուխը նվիրված է տարազին։ Այստեղ նշվում է, որ զանգեզուրցի հայ կնոջ զգեստները շատ նման են Շամախու, Նուխու, Գանձակի, Ղարաբաղի, Ղարադաղի, Մեղրու և Ագուլիսի տարազին։ Այնուհետև նկարագրվում են կանանց տարազների տեսակները՝ աշխատանքային, տոնական, աղջիկների և այլն։ Տղամարդու զգեստները նույնն են, ինչ արևելյան Կովկասի տղամարդկանց հագուստները, որոնք տարածված են Հյուսիսային Կովկասում, Դաղստանից մինչև Ղարաբաղ, Ուրմիո շրջանները։

Հաջորդ գլուխը կրում է «Զբաղմունքներ» խորագիրը, ուր հեղինակը մանրամասն քննության է առնում Զանգեզուրի բնակչության զբաղմունքները։ Նկարագրվում են երկրագործական աշխատանքներն սկսած գարնանացանից մինչև բերքի հավաքումը ներառյալ։ Այդ պրոցեսները շարադրելիս տրվում են նաև նրանց հետ կապված կրոնական հավատալիքները, բերքը առատ լինելու համար կիրառվող հմայական միջոցները և այլն։ Նույն ձևով քննարկվում են անասնապահությունը, որսորդությունը, այգեգործությունը, շերամապահությունը, գյուղական հումքի մշակությունը և դրանց հետ կապված արհեստները (գորգագործություն, ջուլհակություն, կաշեգործություն, կավագործություն, փայտագործություն) և այլն։

Աշխատության հաջորդ գլուխը նվիրված է ընտանեկան կյանքին։ Այս բաժնում քննարկվող հարցերն են՝ հարսանեկան սովորություններ, տղաբերք և մանկատածություն, մահ և թաղում, ընտանեկան կարգ ու կյանք։ Հեղինակը հանգամանորեն վերլուծում է հարսանեկան սովորությունները։ Նա նկատում է, որ իր այցելության միջոցին Զանգեզուրում չի հանդիպել և ոչ մի գերդաստանի։ Այս փաստը խոսում է այն մասին, որ գերդաստանն արդեն քայքայվել էր՝ տեղի տալով փոքր ընտանիքներին։ Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Զանգեզուրի բարբառում չկա ընտանիք բառը, այլ օգտագործվում է օջախ տերմինը կամ պաշտոնական հաշվետվություններում՝ ծուխ հասկացողությունը։ Հեղինակը հանգամանորեն քննության է առնում հարսանեկան սովորությունները, հմտությամբ բացահայտում հարսանիքի հետ առնչվող սովորությունների սոցիալ-տնտեսական պայմանները, նրանց հետ կապված հավատալիքների արմատները։ Լիսիցյանը նրկատում է, որ եկեղեցուց հարսանյաց թափորը սկզբում շարժվում է դեպի աղջկա տունը, ապա նոր տղայի, մինչդեռ հայաբնակ այլ շրջաններում եկեղեցուց ուղղակի դիմում են տղայի տուն։ Դա մի սովորություն է, որը բնորոշ է միայն Զանգեզուրին։ Հեղինակն այդ համարում է մայրիշխանության մնացուկ, որը հիշեցնում է այն ժամանակաշրջանը, երբ հարսանիքից հետո տղան դառնում էր կնոջ ընտանիքի անդամ։ Նույն ձևով նա բացահայտում է տոհմական կարգերի, օջախի, ննջեցյալների պաշտամունքի, հմայական բնույթ կրող ծեսերի նշանակությունը։ Իր ամբողջ համակարգի մեջ է նա քննում տղաբերքին և մանկատածությանը աղերսվող հարցերը՝ հղիություն, ծնունդ, մկրտություն, հմայական միջոցներ երեխաներին չար ուժերի ազդեցությունից ազատելու համար, հիվանդություններ և նրանց բուժման միջոցներ։ Պատմական զարգացման մեջ է քննում նաև այս բաժնի մյուս կարևոր հարցը՝ մահվան և թաղման հետ կապված սովորությունները, սկսած հեթանոսական շրջանից մինչև մեր օրերը։ Հանգամանորեն քննարկվում են նաև ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, նրանց պարտականությունները, իրավունքները, որոնք հիմնականում սովորութային բնույթ ունեն, աշխատանքային, սեռահասակային բաժանումները, տան նահապետի դերը ընտանիքի ղեկավարման մեջ, կանանց դերն ընտանիքում, բաժանման դեպքում սեփականության բաշխման ձևերը և բազմաթիվ այլ հարցեր։

Անդրկովկասի հայ բնակչությունը ռուսական տիրապետության հաստատման միջոցին, ըստ Ստ. Լիսիցյանի, գտնվում էր գերդաստանային շրջանում, որտեղ հասարակության հիմնական բջիջն էր կազմում գերազանցապես մի քանի ամուսնական զույգերից և նրանց երկուերեք սերունդներից բաղկացած բազմանդամ ընտանեկան ու տնտեսական միությունը՝ գերդաստանը (էջ 227)։ Համայնքը նա դիտում է որպես այդ գերդաստանների ամբողջություն, ճիշտ կերպով նկատելով, որ XIX դարի սկզբում Զանգեզուրի գյուղական համայնքը չէր ներկայացնում ազգակցական միություն և մեծ գերդաստանների միջև փոխհարաբերությունները հաստատված էին ոչ թե արյունակցական, այլ տերիտորիալ մերձավորության վրա, հարևանության սկզբունքների վրա։ Այնուհետև հեղինակը բնութագրում է համայնքի հիմնական գծերը, նրա քայքայման սոցիալ-տնտեսական պատճառները, համայնքի պահպանված վերապրուկները։ Այս գլխի հաջորդ հիմնական հարցը սոցիալական շերտավորումն է։ Այդ առնչությամբ վերլուծվում են Զանգե-

զուրի տնտեսությունը, բնակչության եկամտի հիմնական աղբյուրները, կապիտալիստական հարաբերությունների մուտքը և նրանց հետևանքով առաջ եկած դասակարգային շերտավորումը։

Հաջորդ բաժինը նվիրված է հավատալիքներին, ուր համակողմանի քննության են առնվում ժողովրդական տոները, լեռների, արևի, լուսնի, ննջեցյալների պաշտամունքը, անիմիզմի, տոտեմիզմի հետ առնչվող բազմաթիվ հարցեր։ Արժեքավոր դիտողություններ են արվում մեր հեթանոսական կրոնի վերաբերյալ, ցույց է տրվում, որ այն տարբերվում է պարսկականից, որի հիմքը դուալիզմն է՝ Որմիզդի և Ահրիմանի պաշտամունքը։ Նշվում են մի շարք տարբերություններ, որոնք հայոց հեթանոսական կրոնը հեռացնում են պարսկականից, մոտեցնելով փոքրասիականին։ «Զրադաշտական մտածելակերպից շեղումները հայկականի մեջ այնքան խորն էին և բազմակողմանի,— գրում է Ստ. Լիսիցյանը,— որ նրանց վերլուծությունը բերում է ինձ այն եզրակացության, որ հայկական հեթանոսական աշխարհայացքի մեջ երևան է գալիս հիմնական մերձավոր առնչությունը ոչ թե պարսկական զրադաշտական, այլ փոքրասիական ըմբռնումների հետ, որտեղ սիստեմի է վերածվել ոչ թե արարիչ և կործանիչ ուժերի մշտական մրցումն ու հակադրությունը, այլ կյանքի և մահվան կրկնվող հաջորդականությունը, որտեղ կենդանություն տվողը և ինքն էլ կենդանի աստվածությունը մեռնում է և իր մահով սկիզբ է տալիս նոր կյանքին» (էջ 257)։

XIX դարում և XX դարի սկզբում գոյություն ունեցող հավատալիքները քննելով, հեղինակը շատ ճիշտ մոտեցում է ցուցաբերում՝ բացահայտելով նրա տակ թաքնված հեթանոսականը։ Այսպիսով, հավատալիքները նա ուսումնասիրում է զարգացման պրոցեսում՝ ամենահնագույն շրջանից մինչև մեր օրերը։ Հանգամանորեն նկարագրվում են նաև ժողովրդական տոները։ Ցույց է տրվում, որ շատ քրիստոնեական տոներ հեթանոսական են։ Այսպես՝ ջրօրհնեքը կապված է ջրի, տեառնընդառաջը՝ կրակի պաշտամունքի հետ։ Ընդարձակ շարադրանքով է ներկայացվում բարեկենդանի տոնը։ Առաջարկվում է բարեկենդանի հետևյալ մեկնությունը. «Մի այլ աշխատության մեջ[1] այս անունը ես աշխատել եմ բացատրել որպես ողջույն մաղթանք՝ ուղղված վերակենդանացող բնության։ Այդ ողջույնը բխում է նույն մտայնությունից, որպես և բարի լույս, բարի գիշեր բարեմաղթությունները, որոնք բուսի մագիկ զորությամբ նպատակ ունեին սկսվող լույսին կամ գիշերին՝ բարի կատարում ներազդել» (էջ 265)։ Սա ուշագրավ միտք է։ Այնուհետև հեղինակը հանգամանորեն քննության է առնում զատկի ամբողջ համակարգը, համբարձումը, վարդավառը։ Վերջինս, ըստ Ս. Լիսիցյանի, կապվում է Վարդ աստծու հետ, սակայն այս միտքը հաստատող փաստեր չեն բերվում։ Մեզ ավելի հավանական է թվում վարդավառ բառի՝ ակադ. Գ. Ղափանցյանի բացատրությունը, ըստ որի վարդավառ բառը ծագում է խեթական վարդ բառից, որը նշանակում է ջուր և ար բայից, որը խեթերենում նշանակում է լվանալ, վերջինս ստանում է լցնել, սրսկել իմաստը[2]։ Նույնպիսի մանրամասնությամբ ներկայացվում են մյուս տոները՝ Մարիամ Աստվածածին, Սուրբ խաչ և այլն։ Կանգ առնելով լեռների պաշտամունքի վրա, հեղինակը նշում է, որ Զանգեզուրում պաշտամունքի կարևոր վայր են հանդիսացել Մեծ Իշխանասարը, Խուստուփը, Լորաձորը, Շաղաթը, ուր եղել են մատուռներ, աղբյուրներ։ Նկարագրվում է նաև լեռների ոգիների պաշտամունքը։ Հետաքրքրական էր, որ այդ պաշտամունքի վայրերն այցելում էին թե՛ հայերը և թե՛ ադրբեջանցիները։ Հեղինակը նկատում է, որ լուսնի պաշտամունքը Զանգեզուրում ավելի է տարածված, քան արևինը։ Ընդարձակ շարադրմամբ ներկայացվում են հիվանդության, մահվան և ննջեցյալների պաշտամունքի հետ առնչվող հարցերը։ Հանգամանորեն քննարկվում է ոգիների և բաջքերի պաշտամունքը՝ որպես անիմիզմի և տոտեմիզմի վերապրուկներ։

Մենագրությունն ունի անհրաժեշտ գիտական ապարատ՝ անձնանունների, աշխարհագրական անունների, ազգագրական տերմինների ցանկեր։ Հարուստ է ցուցադրական նյութը՝ գծագրություններ, սխեմաներ, աղյուսակներ, քարտեզներ, բազմաթիվ լուսանկարներ, որոնք մեզ ծանոթացնում են Զանգեզուրի աշխարհագրական դիրքին, գյուղերին, քաղաքներին, նյութական և հոգևոր մշակույթին։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատությանը կցված Մելիք-Փարսադանյանների տոհմածառը։

Ստեփան Լիսիցյանի այս փաստալից աշխատությունը Զանգեզուրի հայերի մասին կարևոր ավանդ է մեր ազգագրական գիտության մեջ։

Կ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

---

[1] Խոսքը „Армяне Нагорного Карабаха" չհրատարակված աշխատության մասին է։

[2] Տե՛ս «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հատ. 14, Երևան, 1960, էջ 279—280։